«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ	Ֆիզկուլտուրա
ՀԵՂԻՆԱԿ	Նաիրի Հակոբյան
ՄԱՐԶ	ՔԵրևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	<<-Հայ-չինական բարեկամության դպրոց >>հիմադրամ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն…… 3։

2. Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում……4։

3. Եզրակացություն

4. Օգտագործված գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԾԱՎԱԼԸ: Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, մեկ գլխից, եզրակացությունից և օգտագործած գրականության ցանկ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Սովորողների ուսուցման գործընթացում մեծ դեր ու նշանակություն ունի ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքը: Ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական գործունեությունը կարևոր է ինչպես դպրոցում, այնպես էլ կյանքի բոլոր բնագավառներում: Ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները: Ինքնուրույն գործունեության նպատակը նոր սերնդին կյանքին, աշխատանքին նախապատրաստելն է: Ինքնուրույն գործունեության նպատակը բոլոր ժամանակներում որոշվում է հասարակական պահանջներով, գիտատեխնիկական առաջընթացի զարգացումով, մանկավարժության տեսության և պրակտիկայի զարգացման մակարդակով, ուսումնական հաստատություններով և ուսուցիչների զարգացման մակարդակով: Ինքնուրույն գործունեության նպատակի սահմանման հարցը որքան հին է, այնքան էլ արդիական է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ: Սովորողների ինքնուրույն և ստեղծագործական գործունեությունն է միջին և ավագ դպրոցում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ: Սովորողների ինքնուրույն և ստեղծագործական գործունեությանն է 21-րդ դարում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ : Աշակերտների ինքնուրույն գործունեության նպատակի սահմանումն է ֆիզկուլտուրա առարկայի դասավանդման ընթացքում՝ կարևորելով այն ստեղծագործական մտքերը, գաղափարները, շարժողական

ունակությունները, որոնք այսօր կարելի է արդյունավետ կիրառել ֆիզկուլտուրայի դասավանդման ընթացքում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ:

1.Բնութագրել աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական գործունեության նպատակը ֆիզկուլտուրայի դասավանդման ընթացքում

2.Բնութագրել աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը:

3.Բացորոշել աշակերտների ինքնուրույն աշխատանքների դասակարգման հատկանիշները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ : Հետազոտության տեսական նշանակությունը: Այս թեմայի վերաբերյալ առաջավոր գաղափարների, տեսակետների, կարծիքների ու մոտեցումների ներդրումն է կրթության ոլորտում և մանկավարժական պրակտիկայում:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության ընթացքում մեր կողմից առաջադրված յուրաքանչյուր տեսակետ ու մոտեցում, կարծում ենք, կհարստացնի ինչպես կրթության, այնպես էլ մանկավարժության զինանոցը: ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: Առաջադեմ մանկավարժների առաջադրած գաղափարների ու դրույթների ուսումնասիրություններ, համեմատական վերլուծություն:

Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում

Աշակերտների ինքնուրույնության և ստեղծագործական մտածողության զարգացման խնդիրն այժմ դարձել է դպրոցի ամենավճռական ու ամենաառաջնահերթ հարցերից մեկը, որին պետք է առանձահատուկ

ուշադրություն դարձնել: Աշակերտների մեջ չի կարելի ստեղծագործական միտք զարգացնել, եթե ուսման տարիների ընթացքում նրանք սահմանափակվել են գլխավորապես վերարտադրողական, կատարողական գործունեության պայմաններում և բոլոր գիտելիքները մատուցվել են պատրաստի վիճակում: Գործունեության նկատմամբ ստեղծագործական մոտեցում կարելի է ձևավորել և զարգացնել միայն աշակերտներին սիստեմատիկաբար մասնակից դարձնելով պրպտողական բնույթի աշխատանքներին, կանգնեցնելով նրանց հետզհետե բարդացող ճանաչողական խնդիրների լուծման անհրաժեշտության առջև: Ժամանակակից հոգեբանությունը և դիդակտիկան բացահայտել են խնդիրների մեծ դերը ուսուցման մեջ, որպես աշակերտների մտավոր լարման, ճանաչողական, գործնական ակտիվության բարձրացման, հետաքրքրության ուժեղացման կարևորագույն գործոններից մեկը:

Ինքը՝ մտածողությունը պատմականորեն առաջ է եկել մարդու գործունեության պրոցեսում՝ կյանքի կողմից առաջադրված տարբեր խնդիրներ լուծելու անհրաժեշտությունից: Նպատակին հասնելու ճանապարհին հանդես եկած դժվարությունները առաջացնում են մտքի ակտիվ աշխատանք:[1]

«Խընդիրների լուծումը աշակերտներից միշտ պահանջում է յուրացրածի ոչ թե պարզ վերարտադրություն այնպիսի ձևով, ինչպես այն օգտագործվել է նախորդ փորձի ժամանակ, այլ նրա բովանդակության, կամ գործունեության եղանակի այս կամ այն փոփոխության միջոցով: Խնդիրների առաջադրումը աշակերտների մտածողության առաջմղման անհրաժեշտ պայման է: Ինքը՝ մտածողությունը պատմականորեն առաջ է եկել մարդու գործունեության պրոցեսում՝ կյանքի կողմից առաջադրված տարբեր խնդիրներ լուծելու անհրաժեշտությունից: Նպատակին հասնելու ճանապարհին հանդես եկած դժվարությունները առաջացնում են մտքի ակտիվ աշխատանք: Մարդը ըմբռնում է խնդիրը, ապա՝ փնտրում լուծման ուղիներ, դժվարությունները հաղթահարելու միջոցներ: Ամեն մի ճանաչողական կամ գործնական խնդրի հիմքում ընկած է հակասություն՝ այն

[1] Գիտամեթոդական ամսագիր, Մանկավարժություն, Երևան 2008, էջ 23:

բանի մեջ, ինչ-որ կա և այն, ինչին որ մարդը ցանկանում է հասնել: Այդ հակասությունն էլ հենց միտքը մղում է դեպի առաջ, խթանում լուծման պրպտումները: Հոգեբանությունը պնդում է, որ ամեն մի արդյունավետ մտածողական աշխատանք հենց խնդրի լուծում է: Ամեն մի խնդիր պարունակում է հարց, որի պատասխանը չի գտնվում անմիջապես: Հարկ է լինում այն փընտրել ինքնուրույնաբար' օգտվելով հարցի ու պատասխանի միջև եղած տարբեր միջանկյալ օղակներից: Սակայն խնդիրը ոչ ամեն դեպքում է զարգացնում ստեղծագործական մտածողությունը: Եթե խնդիրը լուծվում է ուսուցչի կամ դասագրքի հեղինակի ցուցադրված պատրաստի օրինակով, ապա նրա լուծումը աշակերտից ինքնուրույն ստեղծագործական մտածողություն չի պահանջում: Աշակերտի գործունեությունը նման դեպքում կրում է վերարտադրողական բնույթ: Այլ բան է, երբ աշակերտին լուծման պատրաստի օրինակ չի տրվում և նա ինքը պետք է գտնի լուծման ուղին: Այս դեպքում խնդրի լուծումը հրահրում է մտածողության ինքնուրույն աշխատանքի, նպաստում նրա ստեղծագործական զարգացմանը: Դպրոցը պետք է սովորեցնի աշակերտներին լուծելու զանազան պրպտողական, ճանաչողական և գործնական խնդիրներ: Սակայն դպրոցական ուսուցման ժամանակ գործնականորեն անհնար է սպառել այն բազում խնդիրները, որոնց աշակերտները կարող են հանդիպել դպրոցն ավարտելուց հետո: Ուստի դպրոցում պետք է ուսուցանել խնդիրների լուծման այնպիսի մեթոդներ ու հնարներ, որոնք այսօր համագործակցային ուսուցման բովանդակությունն են կազմում, որպեսզի վաղվա քաղաքացին պատրաստ լինի կյանքում նոր խնդիրների ինքնուրույն լուծմանը: Կրթության խնդիրն է մարդու զարգացման ընդհանուր և անհատական պահանջների բավարարումը՝ նրա կյանքը ավելի հարմարավետ և բարեկեցիկ դարձնելու համար: Այս խնդիրը լուծելու համար է, որ կրթության բովանդակությունը, առարկայական գիտելիքների ուսուցումից բացի, ներառում է սովորողի ճանաչողական, ստեղծագործական, տրամաբանական, հաղորդակցական, ինքնակազմակերպման, ինքնահաստատման, ինքնագնահատման կարողությունների ձևավորումը, որոնք հիմք են դառնում անհատի

մտածելակերպի, գործելակերպի և վերաբերմունքի զարգացման համար: Այս որակները կազմում են կրթության բովանդակության արժեքային բաղադրիչը, որի գերխնդիրը իր պարտականություններն ու իրավունքները գիտակցող քաղաքացիների ձևավորումն է:[2]

Համագործակցային ուսուցումը ներկայացված է որպես ուսուցման մի արդյունավետ մեխանիզմ, որը մարդկանց համագործության սկզբունքներով ապրելու հնարավորություններ է ընձեռում: Համագործակցությունը խթանում է առաջադիմությունը: [3]

Համագործակցային ուսուցումը ներկայացված է որպես ուսուցման մի արդյունավետ մեխանիզմ, որը մարդկանց համագործության սկզբունքներով ապրելու հնարավորություններ է ընձեռում: Համագործակցությունը խթանում է առաջադիմությունը: Հոգեբանների հետազոտությունները ցույց են տալիս, որ պրպտողական խնդիրների լուծումը այս կամ այն ուսումնավառ առարկայի գիտելիքների համակարգի տիրապետման միջոցներից մեկն է և նպաստում է ճանաչողական ինքնուրույնության և ստեղծագործական մտածողության զարգացմանը: Ուստի նպատակահարմար է հենց ցածր դասարանից (ինչու՞ ոչ հենց մանկապարտեզից) ուսուցման պրոցեսում մտցնել ճանաչողական խնդիրներ և սովորեցնել դրանք ինք նուրույնաբար լուծել: Համագործակցությունն ուսուցման գործընթացը դարձնում է առավել գրավիչ և հետաքրքիր՝ բոլոր սովորողների համար ապահովելով մասնակցության հնարավորություններ: Այն թույլ է տալիս ուսուցչին՝ լուծելու ավանդական մեթոդներով իրականացվող կամ գրեթե անհնար թվացող՝ բոլոր սովորողների ակտիվ մասնակցության ապահովման հարցը: Դասարանդ դառնում է ընդհանուր նպատակներ ունեցող փոքր խմբերի թիվ, ուր հեշտությամբ կարելի է լուծել ամենաբարդ մանկավարժահոգեբանական խնդիրներդ՝ անկախ առարկայից և թեմայից: Սովորողներն իրենց ավելի ազատ և անկաշկանդ են զգում փոքր համագործակցային խմբերում աշխատելիս, որտեղ ստանում են ինքնադրսևորման լայն հնարավորություններ: Նրանք համատեղ

[2] Մխիթար Գոշ, Գիտամեթոդական հոդվածներ, Երևան 2020, էջ 263:
[3] Գիտամեթոդական ամսագիր, Մանկավարժություն, Երևան 2008, էջ 24:

ջանքերով առավել հեշտությամբ են ընկալում նոր նյութդ՝ հայտնագործելով գիտելիքդ և կիրառելով այն: Մեր օրերում դպրոցը չի կարող ղեկավարել աշակերտներին գերազանցապես փաստական նյութեր հաղորդելով: Անհրաժեշտ է հոգ տանել սովորողների տրամաբանական մտածողության ու վերացական ըմբռնումների զարգացման համար և վաղ տարիքից նրանց վարժեցնել ինքնուրույն ստեղծագործական աշխատանքի: Անհրաժեշտ է նաև նշել ուսման դրդապատճառների և անհատական մոտեցման սկզբունքի հարցերդ, որոնք պետք են ուսուցման նկատմամբ սովորողների վերաբերմունքդ կարգավորելու համար: Ակնհայտ է, որ ավելի հեշտ է սովորեցնել այն աշակերտին, որը տրամադրված է սովորելու: Ուսման նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումը ուսուցման կարևորագույն խնդիր է, որը լուծվում է սովորողի մոտ ուսման անհրաժեշտ դրդապատճառներ դաստիրակելու միջոցով: Դրա համար պետք է մշտապես հաշվի առնվեն յուրաքանչյուր աշակերտի առանձնահատկությունները: Այս առումով համագործակցային ուսուցումը ուսուցչին առաջադրում է որակապես նոր խնդիրներ՝ կապված ուսուցման նպատակների հետ, այսօր գիտելիքի մատուցմանն ու վերարտադրմանը փոխարինելու են գալիս ուսուցման գործընթացի կառավարման և սովորողների համագործակցային հմտությունների ձևավորման նոր մոտեցումներ: Խիստ սոցիալական են դառնում ի՞նչ և ինչպե՞ս սովորեցնել հարցերը: «Ուսուցման նոր մոթոդներ սովորելու լավագույն ճանապարհը հենց մեթոդի միջոցով սովորելն է»: Ինքնուրույն աշխատանքներ կազմակերպելիս շատ կարևոր է առանձին սովորողների գիտելիքների խորացումը, գործնականում գիտելիքներդ կիրառելու կարողության, ինքնուրույն մտածելու ունակության, լարված աշխատելու սովորույթի, խոչընդոտներն ու դժվարությունները հաղթահարելու ընդունակությունների ձևավորումը: Ուսուցման ընթացքում սովորողներին ակտիվացնելու համար հարմար է սկսել մտագրոհ մեթոդից: Օրինակ. մեկնաբառն ընտրել –շարժախաղ . և այն աստիճանաբար կապել աշխարհի տարբեր պետությունների լավագույն մարզիկների հետ՝ բերելով օրինակներ շրջապատից, դիտարկել խաղայինլավագույն թիմը : Կարելի է աշխատել զույգերով: Յուրաքանչյուր

աշակերտ աշխատում է դասի առաջին մասի, իսկ զույգը՝ երկրորդ մասի վրա՝ գրելով 3 հիմն. կետ, այնուհետև միասին մշակում են 3 կետ: Որ զույգը անթերի աշխատի կգնահատվի անմիջապես: Սա սովորողներին ակտիվացնելու միջոցներից մեկն է: Համագործակցային ուսուցումը ներառում է բազմաթիվ հնարքների օգտագործման հնարավորություններ, ենթադրելով սովորողների ինքնուրույն մտածողության լայն հեռանկարներ: Նրա ամբողջ նպատակը սովորողների տրամաբանական մտածողության զարգացումն է, որը կրթության համակարգում կարևոր և առաջնային հարց է: Համագործակցային ուսուցումը առավել հուզական է, և այդ պատճառով էլ այն մեծացնում է սովորողների հետաքրքրությունն ուսուցանվող նյութի նկատմամբ: Դրա առավելությունները հիմնված են լուրջ ուսումնասիրությունների և հետազոտությունների վրա: 1898-1989թթ. ընթացքում անցկացվել է ավելի քան 550 համեմատական հետազոտություն՝ համագործակցային, անհատական և մրցակցային ուսուցման արդյունավետությունը պարզելու նպատակով: Այդ հետազոտությունները ցույց են տվել, որ համագործակցային ուսուցումը կիրառելի է բոլոր դասարաններում, բոլոր ուսումնական դասընթացներում՝ անկախ տնտեսական, ազգային միջավայրի առանձնահատկությունների: Նրանք առանձնացրել են 3 հիմնական արդյունք. ա) բարձր առաջադիմություն և արդյունավետություն; բ) ավելի աջակցող և նվիրված հարաբերություններ; գ) հոգեբանական առողջություն, բանիմացություն և ինքնարժևորման ավելի բարձր աստիճան: Ուսուցման ընթացքում համագործակցային ուսման տարրերի կիրառումը նպաստում է. - դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը - ուսուցչի կողմից համագործակցային ուսուցման էության առավել խորը ըմբռնմանը և դասի պլանավորմանը; - ուսուցման արդյունավետության գնահատմանը և արժևորմանը ռեֆլեքսիայի (անդրադարձի) ապահովմանը և խմբային աշխատանքի բարելավմանը:

Հոգեբանների հետազոտությունները ցույց են տալիս, որ պրպտողական խնդիրների լուծումը այս կամ այն ուսումնավառ առարկայի գիտելիքների

համակարգի տիրապետման միջոցներից մեկն է և նպաստում է ճանաչողական ինքնուրույնության և ստեղծագործական մտածողության զարգացմանը:[4]

Միջին և ավագ դասարաններում ինքնուրույն աշխատանքը բավականին մեծ դեր ու նշանակություն ունի: Ինքնուրույն է համարվում այն աշխատանքը, որի ընթացքում սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակը, դրա կատարման կարգը և կատարում են այն՝ առանց ուսուցչի անմիջական մասնակցության: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Միջին և ավագ դասարանում ինքնուրույն աշխատանքի անցկացումն ունի որոշակի առանձնահատկություններ: ՈՒսուցիչները հաճախ կիրառում են աշակերտների ակտիվությունը խթանող հնարներ, և համարում են, որ իրենք կազմակերպեցին ինքնուրույն աշխատանք: Անկասկած, այդ հնարների կիրառմամբ նրանք սովորեցնում են աշակերտներին ինքնուրույն աշխատել,բայց այն դեռ ինքնուրույն աշխատանք չէ: Նախ տեսնենք, թե ինչ են իրենցից ներկայացնում ինքնուրույնություն և ստեղծագործականություն արտահայտությունները: Ինքնուրույնությունը անհատի անձնային որակ է, իսկ ինքնուրույն աշխատանքը՝ ուսումնական աշխատանքի ձև: Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատական որակ: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը: Կարելի է ասել, որ ինչպես դպրոցում, այնպես էլ ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները: 6 Գաղտնիք չէ, որ արդի ժամանակաշրջանում տարրական և միջին դասարաններում ուսումնասիրության միջև գոյություն ունի անջրպետ: Այս երևույթի պատճառները բավականին շատ են, սակայն դրանցից մեկն էլ կարելի է

[4] Գիտամեթոդական ամսագիր, Մանկավարժություն, Երևան 2008, էջ 24:

համարել տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների՝ կրտսեր դպրոցականների ինքնուրույն աշխատանքի հմտությունների ձևավորման վրա ոչ բավարար ուշադրությունը: Նույնիսկ բազմաթիվ փորձառու ուսուցիչներ կազմակերպելով սովորողների ուսումնական գործունությունը՝ չեն խթանում նրանց ակտիվության զարգացմանը: Այդպիսի ուսուցիչներից աշակերտը կարող է օգնություն ստանալ առաջին իսկ դժվարության դեպքում: Այդպես աշակերտն այլևս առանձնապես ակտիվություն չի դրսևորում խնդիրների լուծման նպատակով ինքնուրույն ուղիների որոնման գործում: Աշակերտներին տրվում է պատրաստի արդյունքը, չնայած որ նա կարող է ինքնուրույն որոնել այն: Երբեմն էլ ուսուցիչը չի հետաքրքրվում, թե ինչպես է աշակերտը գրել հարցի պատասխանը, այլ սահմանափակվում է արդյունքների ճշտության ստուգումով, ինչը չի բարձրացնում աշակերտի հետաքրքրությունը՝ առաջադրանքի կատարման համար տարբեր ուղիների որոնման գործում: Տարրական դասարաններում դասերի ընթացքում գերակշռում է ուսուցման ճակատային (ֆրոնտալ) ձևը, երբ աշակերտների գործողությունները հիմնականում կախված են ուսուցչի անմիջական հրահանգներից: Այսպիսի գործողությունները արգելակում են երեխաների զարգացումը, և արդեն V դասարանում սովորողները հայտնվում են անօգնական վիճակում՝ գրքի շուրջ իրականացվող ինքնուրույն աշխատանքի, առաջադրանքների ինքնուրույն լուծման, ստեղծագործական բնույթի աշխատանքների կատարման ընթացքում: Առաջադրանքների ծավալը նրա ուժերից վեր է դառնում, աշխատանքի տեմպը՝ դանդաղ: Ինքնուրույն աշխատանքի հմտությունները չեն ծագում իրենք իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը: Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դաստիարակվում է դասից դաս, դասարանից դասարան: Ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատատարելագործման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության արդյունքում գալիս ենք հետևյալ եզրակացությանը՝ ինքնուրույն աշխատանքի հմտությունները չեն ծագում իրենք իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը: Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար՝ ուսուցչի կատարած աշխատանքի արդյունքում: Ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատական որակ:Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը: Կարելի է ասել, որ ինչպես դպրոցում, այնպես էլ ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները: Այսպիսով, ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատատարելագործման համար: Պետք է մշտապես հիշել, որ ոչինչ հաստատուն չէ, բացի փոփոխությունից, քանզի ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերն ու մեթոդները ևս կապված են հասարակական կյանքի պատմական զարգացման հանգամանքների և մանկավարժական նորագույն փորձի ու նվաճումների հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գիտամեթոդական ամսագիր, Մանկավարժություն, Երևան 2008:
2. Մխիթար Գոշ, Գիտամեթոդական հոդվածներ, Երևան 2020:
3. https://lib.armedu.am/
4. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf
5. https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf